04.03.26 - 04.03.26
13:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 311 լսարան

Ս.թ. մարտի 4-ին՝ ժամը 13:00-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլետի 311 լսարանում տեղի կունենա հանդիպում Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Էյզաբուրո Տանակայի հետ։

Հանդիպման ընթացքում Էյզաբուրո Տանական հանդես կգա «Ինչպես աջակցել երեխաների հոգեկան առողջությանը բնական և մարդածին աղետներից հետո. հոգեբանական առաջին օգնությունից մինչև տրավմային ուղղված կոգնիտիվ-վարքաբանական թերապիա» թեմայով դասախոսությամբ։

Պրոֆեսոր Էյզաբուրո Տանական Տոկիոյի համալսարանի խորհրդատվության և աջակցության ծառայությունների հետազոտական կենտրոնի հոգեբուժության և հանրային առողջության ոլորտի առաջատար գիտնական է։ Նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղություններն են գլոբալ հոգեկան առողջությունը, բարեկեցությունը, սոցիալական անհավասարությունը, հումանիտար ճգնաժամերը, ինչպես նաև բնական և մարդկային գործոններով պայմանավորված աղետներից հետո հոգեկան առողջության խնդիրները։

Պրոֆեսորի մասին ավելին՝ այստեղ։

Մուտքն ազատ է։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am